ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 210 – Ա **23 ապրիլի 2021 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի նշանակման հետ կապված ընկերության ապրանքանյութական արժեքների, փաստաթղթերի հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Լուսինե Վարդանյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
Յուրա Մուշեղյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Արամ Խաչատրյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան
Ժասմենա Վարդանյան	- հանձնող
Աշխեն Խլոյան	- ընդունող
Օնիկ Սարգսյան	- հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև հաշվապահական փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքներում ընդգրկել նաև «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

23.04.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ